

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի Գործադիր տնօրեն՝ Ֆիամետա Չակոբյանը, Գլխավոր հաշվապահ՝ Յովհաննես Իսկաջյանը, Տնտեսագետ՝ Գագիկ Մինասյանը, Իրավախորհրդատու՝ Սերգեյ Չակոբյանը սույնով հայտարարում ենք այն մասին, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել է կամ առնչվում է ընկերությունը:

Գործադիր տնօրեն

Ֆիամետա Չակոբյան

Գլխավոր հաշվապահ

Յովհաննես Իսկաջյան

Տնտեսագետ

Գագիկ Մինասյան

Իրավախորհրդատու

Սերգեյ Չակոբյան

## Միջանկյալ զեկույց

2009թ. երրորդ եռամսյակի ընթացքում Ընկերության կողմից

իրականացված գործունեության վերաբերյալ

**Ջեկուցող Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի Գործադիր  
տնօրեն Ֆիանտա Ֆրանսիկի Հակոբյան**

Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի բաժնետոմսերը դասվում են որպես հասարակ, անվանական բաժնետոմսեր, ներկայումս դրանք ոչ փաստաթղթային ձևի են: Քանակը կազմում է 222183 հատ: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 4000 հայկական դրամ: Բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները և պարտականությունները սահմանվում են Ընկերության կանոնադրությամբ և «Բաժնետիրական Ընկերությունների մասին» ՀՀ օրենքով: Բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների և պարտականությունների գրանցումը կատարում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա » ԲԲԸ – ն: Կանոնադրական կապիտալի չափը կազմում է 888732000 դրամ: Կանոնադրական կապիտալը 100 տոկոսով ձևավորված է սովորական բաժնետոմսերից, որոնց քանակը կազմում է 222183 հատ: Մասնակիցների կողմից իրենց պատկանող արժեթղթերի դիմաց վճարման պարտավորությունը 100 տոկոսով կատարված է:

Ընկերությունը հիմնականում զբաղվում է ալկոհոլային խմիչքների արտադրությամբ և վաճառքով: Առավել կարևորվում են շամպայն գինիների, օղու և կոնյակների արտադրության ոլորտները, որոնց զարգացման հիմնական ուղղությունները կայանում են նոր տեխնոլոգիաների կիրառման, արդի սարքավորումների ձեռք բերման ի օգտագործման մեջ:

Արտադրանքը հիմնականում սպառվում է ներքին շուկայում, որտեղ Ընկերությունը իր արտադրատեսակներով զբաղեցնում է կայուն դիրք: Իրացումը հիմնականում իրականացվում է Ընկերության ֆիրմային խանութների: Արտադրանքի վաճառքը իրականացվում է նաև տարբեր առևտրային կետերին մատակարարելու միջոցով, սակայն դրանցից ոչ մեկը որպես խոշոր սպառող չի դիտվում:

Հիմնական մրցակիցներ են համարվում օղի, գինի, կոնյակ արտադրող ընկերությունները:

Ընկերությունը չունի այնպիսի մատակարարներ, որոնց բաժին է ընկնում ապրանքանյութական արժեքների ընդհանուր մատակարարման 10 տոկոսից ավելին:

Ընկերությունն ունի գործունեության իրականացման համար հատուկ լիցենզիաներ, որոնք տրված են անժամկետ:

Ընկերությունն իր գործունեության մեջ ունի ներգրավված հողատարածքներ, շենքեր, շինություններ, որոնք մեծամասնությամբ կենտրոնացված են ք. Երևան Թբիլիսյան խճուղի 20 հասցեում:

Աշխատողների միջին թվաքանակը 2009թ. երրորդ եռամսյակի ընթացքում կազմել է 200 մարդ:

Ընկերությունը չունի այնպիսի աշխատակիցներ, որոնց տարեկան վարձատրությունը գերազանցում է նվազագույն աշխատավարձի տասնհազարապատիկը:

Ընկերությանը հարկային արտոնություններ տրված չեն:

Ընկերության նկատմամբ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում դատարանի կողմից պատասխանատվության միջոցներ չեն կիրառվել:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախագահի 16.10.09թ. թիվ 1105137 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում ստուգում է իրականացվել ձեռնարկատիրական գործունեության առարկաների՝ առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքի, ապրանքների գրանցման ճշտության վերաբերյալ: Արդյունքում կազմվել է համապատասխան ակտ, ըստ որի Ընկերությանը ներկայացվել է 1002000 (մեկ միլիոն երկու հազար) դրամի չափով պետ. բյուջե վճարման պարտավորություն: Ընկերության հաշվապահական հաշվեկշռում արտացոլված մնացած տույժ-տուգանքների գումարները գոյացել են հաշվարկված և որոշ ուշացումներով հարկերի և այլ պարտադիր վճարների վճարման հետևանքով: Բոլոր տեսակի հաշվետվությունները Ընկերության կողմից ներկայացվել են գործող օրենսդրությանը համապատասխան և առանց ժամկետների խախտման:

Ընկերությունը 2009թ. երրորդ եռամսյակի ընթացքում փոխկապակցված անձանց հետ գործարքներ չի իրականացրել:

Ստորև ներկայացվում է ընկերության 2009թ. երկրորդ եռամսյակի ֆինանսական վիճակի վերլուծությունը

## **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2009թ. III եռամսյակ**

*Ա) Ֆինանսական կայունության ցուցանիշները ընկերությունում բնութագրվում են հետևյալ կերպ՝*

### **1. Ֆինանսական անկախության գործակիցը կազմում է՝**

	<b>Սեփական կապիտալ</b>	—	<b>1205649</b>	—	<b>0.64</b>
<b>1.10.2009 թ.</b>	_____	—	_____	—	

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 0,5:

**2. Պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցության գործակից:**

Այս գործակիցը ցույց է տալիս, թե սեփական կապիտալի միավորի հաշվով որքան պարտավորություններ ունի ընկերությունը, և որոշվում է հետևյալ բանաձևով`

01.10.2009	Պարտավորություններ	663523	0.5
	Սեփական կապիտալ	1205649	

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 1:

**3. Ինքնավարության գործակից:**

Այս գործակիցը ցույց է տալիս, թե ընկերության միջոցների որ մասն է ձևավորվել երկարաժամկետ հիմունքներով ներգրավված աղբյուրների հաշվին, և որոշվում է`

**Սեփական կապիտալ + Երկարաժամկետ պարտավորություններ**

Հաշվեկշռի հանրագումար

1.10.2009 թ.	1205649 + 578855	0.95
	1869172	

**4. Գործող կապիտալ:**

Այն ցույց է տալիս, թե ընթացիկ ակտիվների որ մասն է ապահովված սեփական կապիտալով և երկարաժամկետ պարտավորություններով կամ երկարաժամկետ հիմունքներով ներգրավված միջոցների որ մասն է ուղղված ընթացիկ ակտիվների ֆինանսավորմանը: Այս գործակիցը որոշվում է հետևյալ բանաձևով`

Ընթացիկ ակտիվներ - կարճաժամկետ պարտավորություններ  
կամ

Սեփական կապիտալ + Երկարաժամկետ պարտավորություններ - Ոչ  
ընթացիկ ակտիվներ

Ընկերությունում այն կկազմի՝

$$1.10.2009 \text{ ք.} - 1205649 + 578855 - 328653 = 1455851$$

**5. Ընթացիկ ակտիվների՝ գործող կապիտալով ապահովվածության  
գործակից:**

Այս գործակիցը ցույց է տալիս, թե ընկերության ընթացիկ ակտիվների  
որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի և երկարաժամկետ  
պարտավորությունների հաշվին, և որոշվում է՝

Գործող կապիտալ

\_\_\_\_\_ հարաբերությամբ

Ընթացիկ ակտիվներ

	1455851	—	
01.10.2009	_____	==	0.95
	1540519		

Այս ցուցանիշի ցանկալի նորմատիվային փոքրագույն մակարդակը  
կազմում է 0,1:

**6. Պաշարների՝ գործող կապիտալով ապահովվածության գործակից:**

Այս գործակիցը ցույց է տալիս, թե ընկերության ապրանքանյութական  
պաշարների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի և  
երկարաժամկետ պարտավորությունների հաշվին, և որոշվում է՝

Գործող կապիտալ

\_\_\_\_\_ բանաձևով

Պաշարներ

	1455851	—	
01.10.2009	_____	==	1.16

1253448

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0,5:

7. Սեփական կապիտալի մանրայնության գործակից, որը ցույց է տալիս, թե սեփական կապիտալի հաշվին ձևավորված միջոցների որ մասն է գտնվում շարժունակ (մոբիլ) վիճակում, և որոշվում է՝

01.10.2009  $\frac{1455851}{1205649} = 1.2$

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0,5:

8. Գույքի ռեալ արժեքի գործակից:

Այս գործակիցը ցույց է տալիս, թե ընկերության ընդհանուր միջոցներում որքան մաս են կազմում արտադրության միջոցները: Այն որոշվում է ընկերության արտադրության միջոցների (հիմնական միջոցներ՝ մնացորդային արժեքով, ապրանքանյութական պաշարներ) և հաշվեկշռի հանրագումարի հարաբերակցությամբ՝

Ռեալ ակտիվներ

\_\_\_\_\_ բանաձևով

Հաշվեկշռի հանրագումար

01.07.2009  $\frac{254196+1253448}{1869172} = 0.8$

Այս ցուցանիշի ընդունելի փոքրագույն մակարդակը կազմում է 0,5 և բնութագրում է ընկերության արտադրական պոտենցիալը՝ արտադրության միջոցներով ապահովվածության աստիճանը:

## 9. Հիմնական միջոցների մաշվածության գործակից:

Այն ցույց է տալիս հիմնական միջոցների մաշվածության աստիճանը և որոշվում է հիմնական միջոցների մաշվածության և սկզբնական (վերագնահատված) արժեքի հարաբերությամբ՝

Հ / Մ-երի մաշվածություն

Հ / Մ-երի սկզբնական արժեք

	438859	—	0.63
01.10.2009	_____	==	
	693055		

Բ) Ընկերության իրացվելիության ցուցանիշները բնութագրվում են հետևյալ կերպ՝

### 1. Ընթացիկ իրացվելիության գործակից:

Այն ցույց է տալիս ընկերության կարճաժամկետ պարտավորությունների՝ ընթացիկ ակտիվներով ապահովվածության աստիճանը և որոշվում է ընթացիկ ակտիվների և կարճաժամկետ պարտավորությունների հարաբերությամբ՝

	1540519	—	18.2
01.10.2009	_____	==	
	84668		

Այս ցուցանիշի սահմանային նվազագույն արժեքը կազմում է 2:

### 2. Արագ իրացվելիության գործակից:

Այս գործակիցը ցույց է տալիս կարճաժամկետ պարտավորությունների առավել իրացվելի ակտիվներով ապահովվածության աստիճանը և որոշվում է առավել իրացվելի ակտիվների (դրամական միջոցներ, կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ, դեբիտորական պարտք) և կարճաժամկետ պարտավորությունների հարաբերությամբ՝

	287071	—	3.4
01.10.2009	_____	==	
	84668		

Այս ցուցանիշի սահմանային նվազագույն արժեքը կազմում է 1:

### 3. Բացարձակ իրացվելիության գործակից:

Այս գործակիցը ցույց է տալիս կարճաժամկետ պարտավորությունների՝ դրամական միջոցներով և դրանց համարժեքներով ապահովվածության աստիճանը և որոշվում է դրամական միջոցների ու կարճաժամկետ ֆինանսական ներդրումների և կարճաժամկետ պարտավորությունների հարաբերությամբ: Ընդ որում, այստեղ պետք է հաշվի առնվեն միայն այն ֆինանսական ներդրումները, որոնք ըստ էության համարժեք են դրամական միջոցներին:

Ընկերությունում բացարձակ իրացվելիության գործակիցը կկազմի՝

54997 — 0.65

01.10.2009

84668

Այս գործակցի ցանկալի արժեքն ընկած է 0,2 և 0,5 թվերի սահմաններում:

### 11. ՇԱՀՈՒՔԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՇԵՄ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՊԱՇԱՐ

Ընկերության շահութաբերության շեմի և ֆինանսական կայունության պաշարի որոշման համար անհրաժեշտ տվյալները վերցված են ընկերության «Ֆինանսական արդյունքների մասին» Ձև N:2 հաշվետվությունից:

Դ/Դ	Ցուցանիշներ	
1.	Իրացումից զուտ հասույթ	516311
2.	Փոփոխումն ծախսեր	445238
3.	Համախառն շահույթ	71073
4.	Սահմանային շահութաբերություն	0.14
5.	Հաստատուն ծախսեր	151669
6.	Արտադրանքի իրացումից շահույթ	-80596
7.	Շահութաբերության շեմ	1083350
8.	Ֆինանսական կայունության պաշար	-567039

Շահութաբերության շեմն իրենից ներկայացնում է ինքնաձախսածածկման կետը, այսինքն՝ իրացման այն ծավալը, որի դեպքում ընկերության հիմնական շահույթը հավասարվում է հաստատուն ծախսերի:

Ֆինանսական կայունության պաշարը կազմում է այն լրացուցիչ իրացման ծավալը, որի դեպքում ընկերությունն արդեն փոխհատուցում է իր հաստատուն ծախսերը և իրացման ամեն հաջորդ միավորի դիմաց ստանում է սահմանային շահույթին հավասար շահույթ:



## 12. ԱԿՏԻՎՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Շրջանառելիության ցուցանիշները ցույց են տալիս, թե ընկերության այս կամ այն ակտիվները քանի անգամ են շրջանառվել տարվա կամ վերլուծվող ժամանակաշրջանի ընթացքում:  
Մասնավորապես շրջանառելիությունը բնութագրող ցուցանիշներն են.

### 1. Ակտիվների շրջանառելիության գործակիցը կազմում է՝

$$\frac{516311}{1942894} = 0.26$$

### 2. Սեփական կապիտալի շրջանառելիության գործակիցը կազմում է՝

$$\frac{516311}{1242484} = 0.42$$

Այս գործակցի մեծ արժեքը ակտիվների շրջանառելիության գործակցի համեմատ վկայում է ֆինանսական անկախության գործակցի փոքրացման և ֆինանսական կայունության անկման մասին:

3. Հիմնական միջոցների շրջանառելիության կամ ֆոնդահատույցի գործակիցը, որը բնութագրում է ընկերության հիմնական միջոցների շրջանառելիության արագությունը, որը հաշվետու ժամանակաշրջանում կազմում է՝

$$\frac{516311}{260610} = 1.98$$

4. Ընթացիկ ակտիվների շրջանառելիության գործակիցը, որը բնութագրում է ընթացիկ ակտիվների շրջապտույտի արագությունը, կազմում է՝

$$\frac{516311}{1607827} = 0.32$$

Իսկ ընթացիկ ակտիվների շրջապտույտի արագությունը օրերով կկազմի՝  
270: 0.32 = 843.8օր:

5. Գործող կապիտալի շրջանառելիության գործակիցը կազմում է՝

$$\frac{516311}{1196845} = 0.43$$

Իսկ գործող կապիտալի շրջապտույտի տևողությունը կկազմի՝  
 $270 : 0.43 = 627.9$  օր:

6. Պատրաստի արտադրանքի շրջանառելիության գործակիցը կազմում է՝

$$\frac{516311}{88277} = 5.85$$

Այս գործակցի աճը վկայում է ընկերության արտադրանքի նկատմամբ պահանջարկի աճի մասին: Այն օգտակար է հաշվարկել իրացվելիության վերլուծության ժամանակ գնահատելու համար պատրաստի արտադրանքի իրացվելիության աստիճանը:

7. Դեբիտորական պարտքի շրջանառելիության գործակիցը կազմում է՝

$$\frac{516311}{255313} = 2.02$$

Դեբիտորական պարտքի շրջապտույտի միջին ժամկետը օրերով կկազմի՝  
 $270 : 2.02 = 133.7$  օր:

8. Կրեդիտորական պարտքի շրջանառելիության գործակիցը կազմում է՝

$$\frac{516311}{112030} = 4.6$$

Կրեդիտորական պարտքի շրջապտույտի միջին ժամկետը օրերով կկազմի՝  
 $270 : 1.26 = 214.3$  օր:

Այս ցուցանիշի աճը վկայում է ընկերության կողմից պարտքերի մարման արագության աճի մասին, իսկ իջեցումը՝ ապառիկով գնումների մասին:

9. Պաշարների շրջանառելիության գործակիցը, որը բնութագրում է ապրանքանյութական պաշարների շրջանառելիության արագությունը, 2009թ. III եռամսյակի համար կազմում է՝

$$\frac{516311}{1284774} = 0.4$$

Ստորև ներկայացվում է Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի կողմից 2009թ.

երրորդ եռամսյակի ընթացքում հաշվարկված և պետ. բյուջե վճարված գումարները ըստ

հարկատեսակների

հազ. դրամ

h/h	Հարկատեսակ	Հաշվարկվել է	Վճարվել է
1	ԱԱՀ	16590.0	17316.0
2	Ակցիզային հարկ	26417.0	25700.0
3	Եկամտահարկ	5432.0	4900.0
4	Շահութահարկ	-	1097.0
5	Գույքահարկ	428.0	440.0
6	Հողի հարկ	1853.0	976.0
7	Բնապահպանական վճար	57.0	63.0
	<b>ԸՆԴՀԱՄԵՆՆՂ</b>	<b>50777.0</b>	<b>50492.0</b>

Հաշվետու եռամսյակի ընթացքում ԸՆԿերությունը շարունակել է Բեյլառուսի Հանրապետության մի շարք կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի շրջանակներում իր կողմից ստանձնած պարտավորությունների կատարումը՝ Գնորդ կազմակերպությունների պատվիրված ապրանքների արտահանումը, ինչպես նաև ՌԴ քաղաք Մոսկվա՝ «Արմա-Ֆրանս» ՍՊԸ:

ԸՆԿերությունը նպատակ ունի իր ապրանքային տեսականին լայնորեն ներկայացնի բելոռուսական, ռուսական ինչպես նաև այլ շուկաներում, դրանով ապահովելով արտահանման կայուն ծավալներ և ֆինանսական միջոցների մշտական ներհոսք:

Ինչպես արդեն իսկ տեղեկացվել էր ԸՆԿերությունը բացի իր արտադրատեսակները արտահանելուց սկսել է նաև իր բելոռուսական գործնկերների արտադրանքը ներմուծել ՀՀ – ի տարածք, մասնավորապես սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին ԸՆԿերությունը ներմուծել է բելոռուսական «Վիտեբսկի լիկյորների և օղիների գործարան» ՀՈՒԶ – ի և «Գոմելի լիկյորների և օղիների գործարան» ՀՈՒԶ – ի արտադրանքը Հայաստանի Հանրապետություն, հիմնականում օղիներ, թրմօղիներ և լիկյորներ: Նման գործարքները իրականացումը նպաստում է ինչպես ԸՆԿերության ֆինանսատնտեսական զարգացմանը,

այնպես էլ ակնկալում է փոխշահավետ համագործակցության հեռանկարներ, որն էլ ավելի կընդլայնի գործընկերության շրջանակները և կապահովի ֆինանսական միջոցների մշտական ներհոսք դեպի ՀՀ և որոշ չափով կավելացնի ապրանքատնտեսական շրջանառությունը երկրների միջև: Իհարկե նման գործարքների ռիսկայնության ցուցանիշը բարձր է դիտվում, քան որ Գնորդ հանդիսացող կողմերը չեն ապահովում կանխավճար, ըստ կնքված պայմանագրերի վճարումները կատարվում են հետաձգված եղանակով, որը կարող է հետագայում ազդեցություն թողնել Ընկերության վրա կապված արտարժույթների կուրսերի փոփոխման հետ:

Հաշվետու եռամսյակի ընթացքում նույնպես շարունակվում է դիտվել իրացման ծավալների անկում: Ընկերության կարծիքով դա կապված է միջազգային տնտեսական ճգնաժամի հետ: Ուսումնասիրվում են նոր շուկաներ մուտք գործելու հնարավորությունները, մասնավորապես ԱՊՀ և եվրոպական երկրներ:

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության արտադրանքի արտահանումներ են եղել նաև Վրաստանի Հանրապետություն՝ ք. Ախալքալակ, ինչպես նաև արտահանման փոքր խմբաքանակ է պատրաստվում դեպի Կիպրոսի Հանրապետություն:

Մշտապես պլանավորվում են զարգացման հեռանկարները, քանի որ ներկա պահին Ընկերությունը աշխատում է իր հզորության մոտ 30 տոկոսի չափով: Մշակվում են արտադրության և սպառման օպտիմալ, ճկուն տարբերակներ, որոնք կկարողանան ապահովել բիզնեսի հնարավորինս կայուն զարգացում: Սպառման ծավալների ընդլայնման նպատակով Ընկերությունը ճկուն գնային քաղաքականություն է վարում իր արտադրանքն առաջարկելով ինչպես խոշոր իրացում ապահովող ցանցերին, այնպես էլ մանրածախ վաճառակետերին, միաժամանակ ապահովելով նրանց մեջ առողջ մրցակցություն, թույլ չտալով ոտնահարելու որևէ սպառողի (ինչպես բիզնես, այնպես էլ վերջնական) օրինական շահերը:

Ընկերությունը վարկ ստանալու նպատակով դիմում - հայտ է ներկայացրել «Յունիբանկ» ՓԲԸ – ին 50.000.000 (հիսուն միլիոն) դրամ վարկ տրամադրելու խնդրանքով, 14% նախընտրելի տոկոսադրույքով, և որպես գրավ առաջարկելով իր սեփականությունը հանդիսացող, Թբիլիսյան խճուղի 20 հասցեում գտնվող բենզալցակայանը: Արդյունքում համապատասխան պայմանագրերի կնքումից հետո 2009թ. նոյեմբերի 10 – ին Ընկերությանը տրամադրվել է նշված 50.000.000 (հիսուն միլիոն) դրամ վարկային գումարը, 14 % տոկոսադրույքով, տասնութ ամիս ժամկետով: Վարկն անհրաժեշտ է Ընկերությանը օժանդակ միջոցների (խցաններ, ապակե տարաներ, պիտակներ, ջերմակծկման ծածկոցիկներ, սովարաթղթե արկղեր, և սպիրտի թորման նպատակով ցորենի) ձեռք բերման համար:

Ակտիվների 5 տոկոսը գերազանցող գործարքներ չեն իրականացվել:

Ընկերության ղեկավարության կարծիքով այսքանն է այն կարևոր դեպքերի նկարագիրը, որոնք կարող են որոշակի ազդեցություն ունենալ Ընկերության ֆինասատնտեսական վիճակի վրա:

Ձեկույցը հրապարակեց

Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի

Գործադիր տնօրեն

Ֆիամետա Ֆրանսիկի Հակոբյան

ՀԱՇՎԵՏՈՒԹՅԱՆ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Միջանկյալ հաշվետվություն  
Երրորդ եռամսյակ

ԵՐԱՆԻ «ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 20, հեռ. 28 – 54 – 76, ֆաքս 28 – 54 – 68

էլ. փոստ info@armchampagne.am

N 24 11.11.2009թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ հասարակ, անվանական

արժեթղթերի քանակը՝ 222183 հատ

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ 4000 ՀՀ դրամ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում քացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել հաշվետվության ամբողջականությունը»:

ստորագրող անձինք՝

<u>Յ. Իսկաջյան</u> (անուն, ազգանուն)	<u>Գլխավոր հաշվապահ</u> (պաշտոն)	_____	<u>11.11.2009թ.</u> (ամսաթիվ)
<u>Գ. Մինասյան</u> (անուն, ազգանուն)	<u>Տնտեսագետ</u> (պաշտոն)	_____	<u>11.11.2009թ.</u> (ամսաթիվ)
<u>Ս. Հակոբյան</u> (անուն, ազգանուն)	<u>Իրավախորհրդատու</u> (պաշտոն)	_____	<u>11.11.2009թ.</u> (ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են (ստորագրությունները վավերացվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի, կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)՝

<u>Ֆ. Հակոբյան</u> (անուն, ազգանուն)	<u>Գործադիր տնօրեն</u> (պաշտոն)	_____	<u>11.11.2009թ.</u> (ամսաթիվ)
---	------------------------------------	-------	----------------------------------

Կ.Տ.

## **Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ** **Հաշվապահական հաշվառման քաղաքականություն**

1. Հաշվապահական հաշվառումը տարվում է մենորիալ – օրդերային եղանակով, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաստատված հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջներին և կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեությանը համապատասխան:

2. Ֆինանսական հաշվետվությունները կազմվում են հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան:

### **3. Պաշարներ.**

Պաշարների կազմում հաշվառվում են այն ապրանքնյութական արժեքները, որոնք.

ա/ պահվում են սովորական /ամենօրյա/ գործունեության ընթացքում վաճառքի համար,

բ/ արտադրության ընթացքում են՝ այդպիսի վաճառքի համար,

գ/ արտահայտված են նյութերի և արագամաշ առարկաների ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայություններ մատուցելու ընթացքում օգտագործելու համար:

Պաշարներն ընդգրկում են.

- ապրանքները, ներառյալ կազմակերպությունների կողմից գնված և վերավաճառքի համար պահված հողը /հողամասերը/ և այլ ունեցվածքը,
- պատրաստի արտադրանքը,
- անավարտ արտադրությունը,
- նյութերը և օժանդակ միջոցները, որոնք պետք է օգտագործվեն արտադրության ընթացքում,
- արագամաշ առարկաները:

Պաշարները՝

- մուտքագրվում են ձեռք բերման արժեքով (գնման գին + ձեռք բերման հետ կապված տրանսպորտային , բեռնման , բեռնաթափման և այլ ծախսումներ),
- ինքնարժեքը ձևավորվում է ձեռք բերման արժեքով և վերամշակման հետ կապված բոլոր ծախսումներով , ինչպես նաև պաշարները վիճակի բերելու հետ կապված այլ ծախսեր,
- ինքնարժեքը, ձևավորման ընթացքում, ելքագրվում է ԱՄԱԵ (ՖԻՖՈ) , ՎՄԱԵ (ԼԻՖՈ) և միջին կշռված արժեքի բանաձևերով, ելնելով արտադրության անհրաժեշտությունից,

- իրացված պատրաստի արտադրանքի ինքնարժեքի հաշվարկը կատարվում է միջինացված եղանակով,
- պաշարների արժեքի փոփոխությունը կատարվում է ըստ տեսակների,
- որպես ծախս ճանաչվում են պաշարների ինքնարժեքը , պաշարների կորուստները, գերնորմատիվային ծախսումները, տեխնոլոգիական գործընթացով չնախատեսված պահպանման ծախսումները, վարչական վերադիր ծախսումները, վաճառքի (կոմերցիոն) ծախսումները,
- պաշարներն իրացվում են շուկայական գների համապատասխան,
- արագամաշ առարկաների արժեքը դուրս է գրվում շահագործման հանձնելու պահին:

4. Պատրաստի արտադրանքի հաշվառում փաստացի ինքնարժեքով :

5. Հիմնական միջոցների հաշվառման նպատակով սահմանվում է հետևյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը.

ա/ հիմնական միջոցների խմբին են դասվում նյութական այն արժեքները, որոնք

- առկա են կազմակերպությունում արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ապրանքների իրացման, վարձակալության տալու կամ վարչական նպատակով օգտագործելու համար,
- նախատեսվում է օգտագործել մեկ տարի և ավելի ժամկետում:

բ/ Հիմնական միջոցները սկզբնապես չափվում են`

- միջոցի ձեռքբերման կամ կառուցման ժամանակ վճարված դրամական միջոցների գումարին, իսկ այլ ձևով հատուցելու դեպքում` հատուցման իրական արժեքին,
- միջոցի ձեռքբերման կամ կառուցման կողմերի համաձայնությամբ որոշված վճարվելիք, վճարված դրամական միջոցների գումարին, իսկ այլ ձևով հետագայում հատուցելու դեպքում` հատուցման իրական արժեքին` միջոցի ձեռքբերման պահի դրությամբ:

գ/ Հիմնական միջոցը ճանաչվում է որպես ակտիվ, երբ

- ակնկալվում է, որ դրա հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն,
- դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

դ/ Հիմնական միջոցները սկզբնական ճանաչումից հետո հաջորդող ժամանակահատվածներում հաշվառվելու են իրենց սկզբնական արժեքով հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:



ե/ Հիմնական միջոցները բաժանվում են հետևյալ խմբերի՝

- շենքեր
- կառուցվածքներ
- փոխանցող հարմարանքներ
- մեքենաներ և սարքավորումներ
- տրանսպորտային միջոցներ
- արտադրատնտեսական գույք, գործիքներ
- բազմամյա տնկարկներ
- բանող և մթերատու անասուններ
- այլ հիմնական միջոցներ:

զ/ Հիմնական միջոցների արժեքը պարբերաբար նրա օգտագործման ընթացքում դուրս է գրվում ծախսերով: Հիմնական միջոցների մաշվածության ժամկետները սահմանվում են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմաներով:

է/ Հիմնական միջոցների վրա կատարած նորոգման ծախսերը կապիտալացվում են, երբ դրանց հետևանքով տեղի է ունենում հիմնական միջոցների արդիականացում, կամ երբ նորոգման ծախսերը գերազանցում են նորոգվող հիմնական միջոցի տարեսկզբի մնացորդային արժեքի 10%-ը: Մնացած ծախսերը ծախսագրվում են:

ը/ Հիմնական միջոցները հաշվառվում են ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատված հաշվապահական հաշվառման հաշվային պլանով նախատեսված հաշիվներով:

6. Ոչ նյութական ակտիվներ.

ա) գնահատում սկզբնական , ձեռք բերման արժեքով (հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումը) :

բ) ամորտիզացիոն ժամկետը տաս տարի :

7. Ներդրումային գույքի հաշվառում սկզբնական , ձեռք բերման արժեքով (հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումը) :

8. Էական սխալների ընդգրկում ընթացիկ ժամանակաշրջանի զուտ շահույթը կամ վնասը որոշելիս :

9. Արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ճանաչումը որպես եկամուտ կամ ծախս :

10. Փոխառության ծախսումները դրանք տոկոսների վճարման և այլ ծախսումներն են, որոնք ընկերությունը կատարում է՝ կապված փոխառու միջոցների ստացման հետ: Փոխառության ծախսումները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվել են/ՀՀՀՀՍ 23/:

11. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն , հաշվառումը կարգավորող օրենսդրության մեջ փոփոխություններ լինելու դեպքում :

Գործադիր տնօրեն

***Ֆ.Ֆ. Հակոբյան***

Գլխավոր հաշվապահ

***Յ.Ս. Իսկաջյան***